ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ԱԼԵՔՍԱՆԴՐ Մ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ

Սեպտեմբերի 7-ին, ուրբաթ, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը, Երևանում, Կառավարական տանը, այցելություն տվեց Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի առաջին տեղակալ մեծահարգ տիար Ալեքսանդր Մ. Կիրակոսյանին՝ ընկերակցությամբ Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ռուբեն Հ. Պարսամյանի:

Վեհափառ Հայրապետի և Մինիստրների խորհրդի պրն. նախագահի տեղակալի միջև տեղի ունեցավ սիրալիր, բարեկամական զրույց, ջերմ մթնոլորտում:

Այս առթիվ Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը, Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպս. Բերբերյանը և «Էջմիածին» ամսագրի խմբագիր պրն. Արթուն Հատիտյանը: